ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

«ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԿՈԼԵԳԻԱ»

ինքնակարգավորվող կազմակերպության դիտորդ խորհրդի և կարգապահական հանձնաժողովի 03.05.2011թ. ընդլայնված նիստի

Մասնակցությամբ՝

Կարգապահական հանձնաժողովի նախագահ՝ Խաչատուր Ղահրամանյանի

Հանձնաժողովի անդամներ՝ Աղասի Արսենյանի, Արման Սարգսյանի, Սոֆյա Դավթյան

Դիտորդ խորհրդի նախագահ՝ Հրանտ Ղամբարյանի

Խորհրդի անդամներ՝ Խաչիկ Նազարյանի, Վահագն Ավագյանի,Արսեն Չիտչյանի, Գևորգ Ավագյանի, Լևոն Պետրոսյանի, Ռուբեն Խալաթյանի

Օրակարգում

Սնանկության գործերով կառավարիչ Ռոբերտ Արամի Մարգարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցի քննարկումը:

Նիստին ներկայացել էին դիմումատու՝ Արմեն Մկրտչյանը և «Արմաս» ՍՊԸ-ի սնանկության կառավարիչ Ռոբերտ Արամի Մարգարյանը:

Նիստը բացեց դիտորդ խորհրդի նախագահ Հ.Ղամբարյանը, որը և ներկայացրեց «ՍԳԿԿ» ԻԿԿ մուտք եղած դիմումը: Դիտորդ խորհրդի նախագահ Հ. Ղամբարյանը առաջարկեց դիտորդ խորհրդի անդամներին քվեարկել սնանկության գործերով կառավարիչ Ռոբերտ Արամի Մարգարյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը: Խորհրդի անդամները միաձայն որոշեցին՝ հարուցել կարգապահական վարույթ:

Այնուհետև դիտորդ խորհրդի նախագահ Հ. Ղամբարյանը առաջարկեց կարգապահական հանձնաժողովին անցնել օրակարգի հարցի քննարկմանը:

Կարգապահական հանձնաժողովի նախագահ Խ.Ղահրամանյանը առաջարկեց դիմումատուին ներկայացնել դիմումը, այնուհետև հարցեր ուղղել վերջինիս, որից հետո միայն լսել «Արմաս» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Ռոբերտ Մարգարյանին:

Արմեն Մկրտչյանը հրապարակեց «ՍԳԿԿ» ԻԿԿ 21.04.2011թ. ներկայացրած դիմումը և խնդրեց կառավարիչ Ռոբերտ Մարգարյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության և կիրառել տույժեր, այդ թվում նաև դրամական:

Ինչպես կարգապահական հանձնաժողովի, այնպես էլ դիտորդ խորհրդի անդամները կարգապահական վարույթի շրջանակներում հարցեր ողղեցին դիմող Արմեն Մկրտչյանին և «Արմաս» ՍՊԸ-ի սնանկության կառավարիչ Ռոբերտ Արամի Մարգարյանին: Հարցերը վերաբերում էին «Արմաս» ՍՊԸ-ի սնանկության վարույթին: Մասնավորապես ում կողմից է կնքվել վարկային, գրավի և երաշխավորության պայմանագրերը, ով է ներկա եղել նախապես հայտարարված գույքագրման ժամանակ և արդյոք գույքագրում կատարելու համար «Արմաս» ՍՊԸ-ի սնանկության կառավարիչ Ռոբերտ Մարգարյանը կատարել է պատշաճ ծանուցում:

Դիմող՝ Արմեն Մկրտչյանը կատարված հարցադրումների վերաբերյալ հայտնեց իր դիտողությունները, նշելով, որ իբր հարցերը չեն վերաբերվում բուն դիմումին, քանի որ դրանք արդեն իսկ հաստատված են օրինական ուժի մեջ մտած դատական ակտով /ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2011թ. որոշում/ և որ այն արդեն քննարկման առարկա դառնալ չի կարող: Միաժամանակ հայտնեց, որ բոլոր բարձրացված հարցերի վերաբերյալ պատճառաբանությունները արդեն իսկ նշվել են իր կողմից դիմումը ներկայացնելիս:

Դիմողի այն հայտարարությանը, որ իբր հանձնաժողովի անդամները քննարկում են օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, կարգապահական հանձնաժողովի նախագահ Խ.Ղահրամանյանը հայտնեց, որ հանձնաժողովը չի քննարկում օրինական ուժի մեջ մտած դատական ակտը և դրանով հաստատված հանգամանքները և իրավասու էլ չի այն քննարկել, սակայն հանձնաժողովը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր հանգամանքները:

Դիմումը վերաբերում է «Արմաս» ՍՊԸ-ի սնանկության վարույթին և հետևաբար կարգապահական հանձնաժողովը պետք է քննարկի վարույթին առնչվող բոլոր հանգամանքները, այդ թվում կառավարիչ Ռոբերտ Մարգարյանի կողմից կատարված գործողությունները:

«Արմաս» ՍՊԸ-ի սնանկության կառավարիչ Ռոբերտ Արամի Մարգարյանը հայտնեց, որ «Կոնվերս բանկ» ՓԲԸ և «Արմաս» ՍՊԸ-ի միջև 05.11.2007թ. կնքվել է վարկային պայմանագիր, գրավի պայմանագիր, որով գրավադրվել է «Հայպեռլիտ» ՍՊԸ-ի շարժական գույքերը /Կռազ 53212 մակնիշի ավտոմեքենա 1հատ, հիդրավլիկ մամլիչ 2 հատ և փքման վառարան 1 հատ և երաշխավորության մասին պայմանագիրը /երաշխավոր Արմեն Մկրտչյան/: Կառավարիչը միաժամանակ հայտնեց, որ ինքը մի քանի անգամ պատշաճ կարգով նշանակել է գույքագրում /25.08.2008թ. և 10.10.2008թ./, սակայն գույքագրում չի կատարվել պարտապանի /նույն դիմումատու Արմեն Մկրտչյանի/ չներկայանալու պատճառով: Այնուամենայնիվ արդեն 25.01.2010թ-ին նախապես նշանակված գույքագրման ժամանակ կառավարչին ներկայացվել է գույք, սակայն ոչ պարտապանի և ոչ էլ գրավատու՝ «Հայպեռլիտ» ՍՊԸ-ի կողմից չի ապահովվել նշված գույքերի փաստաթղթերը, որով հնարավոր կլիներ այդ գույքը նույնականացնել: Բացի այդ փակ է եղել Կռազ 53212 մակնիշի ավտոմեքենան, ինչի պատճառով հնարավոր չի եղել պարզել թափքի և շարժիչի համարները:

Կառավարիչը հայտնել է, որ 25.01.2010թ-ին կազմված գույքագրման մասին ակտը ստորագրվել է պարտապանի՝ «Արմաս» ՍՊԸ-ի տնօրենի, «Հայպեռլիտ» ՍՊԸ-ի /որը հանդիսանում է նույն դիմումատու և երաշխավոր Արմեն Մկրտչյանը/, «Արմաս» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Ռոբերտ Արամի Մարգարյանի, և «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի կողմից: Ի դեպ «Արմաս» ՍՊԸ-ի սնանկության կառավարիչ Ռոբերտ Մարգարյանը և «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ն 25.01.2010թ. ակտը ստորագրալ են վերապահումով: Կառավարիչը հայտնել է նաև, որ պարտապանի կողմից իրեն չեն հանձնվել հաշվապահական և այլ փաստաթղթեր, իսկ ներկայացված կրեդիտորների և դեբիտորների ցուցակը իր մեջ պարունակել է ոչ հավաստի տեղեկություններ /նշվածը հավաստվում է սնանկության վարույթի ընթացքում որոշ կրեդիտորների կողմից ներկայացրած պահանջներով որոնք առկա չեն եղել պարտապանի կողմից ներկայացված ցուցակում/:

Այնուհետև կարգապահական հանձնաժողովի կողմից հարց տրվեց դիմումատու՝ Արմեն Մկրտչյանին, թե ինչու վերջինս՝ որպես պարտապան «Արմաս» ՍՊԸ-ի տնօրեն չի կատարել իր պարտականությունը, այն է կառավարչին չի հանձնել ընկերության փաստաթղթերը և որպես «Հայպեռլիտ» ՍՊԸ-ի տնօրեն ինչու չի ապահովել գույքագրման ժամանակ գույքերի պատշաճ հանձնում, մասնավորապես ինչու վերջինս հնարավորություն չի տվել /ապահովել պայմանները/ գույքը նույնականացնելու համար: Նշված հարցադրման կապակցությամբ դիմող Արմեն Մկրտչյանը հայտնեց, որ մոտակա երկու օրվա ընթացքում նա կարող է ապահովել դա:

Դիտորդ խորհրդի անդամներ Ա.Չիտչյանը և Լ.Պետրոսյանը նշեցին, որ դիմումատու՝ Արմեն Մկրտչյանը ոչ թե մոտակա երկու օրվա ընթացքում պետք է ապահովեր գույքագրման պատշաճ կատարումը, այլ կառավարչի առաջին իսկ նշանակած գույքագրման ժամանակ, որը մինչ օրս կատարված չէ:

Այս դիրքորոշումը լսելուց հետո Արմեն Մկրտչյանը կրկին հայտնեց, որ բարձրացված հարցադրումները չեն վերաբերվում բուն դիմումին:

Այնուհետև կարգապահական հանձնաժողովը միաձայն որոշեց Արմեն Մկրտչյանի դիմումը և դրան կից փաստաթղթերը ուսումնասիրելու համար հետաձգել լսումը, կարգապահական հանձնաժողովի նիստ նշանակել և 10.05.2011թ. ժամը 15-00-ին:

Դիտորդ խորհրդի նախագահ Հ. Ղամբարյան

Կարգապահական հանձնաժողովի
Նախագահ Ս.Ղահրամանյան